

ԽԱՐԱԿԱՆ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍԸ

Ա. ՏԵՐԻ

30 ՅՈՒՆԻՍ 1912

ԹԻՒ 20

Խմբագրողիս
Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Արտատպի
Հ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԴՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քանդող մտայնողներ (խմբ.)

Օսարին ետեւին մի՛ ներքաւ

Աւանտ ճիւղեր (Բան.)

Բաց նմանի

Այլեւայլ

Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

ԽՈՐԷՆ Ա. ՔԶՅ. ԳԱԼԵՕՆՃԵԱՆ

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

ԱՄԱՍԻԱ

Տպագ. ՅՈՎ.ՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԸՄԵԱՆ

«ԱՄԱՍԻԱ» ՀԱՅԿԻ

آماسیه ده «آماسیه» غزته سی مدیریت

Խմբագրություն «ԱՄԱՍԻԱ» Կիսապսայ հանդէսի-Ամասիա
Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'sie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 1ին եւ 15ին, թուրքերէն եւ հայերէն
բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12
էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն
ստրեկան 24 թիւ պիտի տրուի:

ԲՆԺՈՆ.ՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ,

Թուրքիա տարեկան	4	մեծիս	Արտատպանական տարեկան	5	գր
» վեգանստայ	0.50	»	» վեգանստայ	2.50	»

Բաժնետիրը բացառեալապէս կրնի ինքն ինքն: Իրականացումներու համար ա-
ռանձին նպաստաւոր տարբերակ կը տրուի:

Տասն օրեակ «Ամասիա» ապաւոյնին մէկ օրեակ հուր:

«ԵՐԳԵՑԻ»

ՀԵՂԻՆԱԿ ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ

Գոյսրիկ բանաստեղծական հասոր մը 288 էջերէ բաղկացեալ: մա-
մուր եւ հաճելի սյուզրութեանը ուր պիտի զտնեմ պատմական վառ երե-
ւակայութեան սիրուն եւ յայտնի կտորներ:

Կը յանձնարարենք հրատարակութեան. ստանալու համար պէտք է դիմեն
տեղա Տեւր Արեքեանցով Եանդեանի,

Դին Թուրքիոյ համար 10 դահեկան

Եւրոպայի » 2 Իրանի

Ռուսիայի » 90 Կոպէկ

ՄԱՅՈՒՆ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ՅՈՒՆԻՍ 1912

ԹԻԻ 20

Խմբագրական

ՔԱՆԴՈՂ ՄՏԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Քոչանայի տարտազգեղիկ զէպքերու մանրամասնութեանց անոնք որ հետեւեցան՝ տեսան անշուշտ հոն այն ոգին, այն զգացումը, այն քանդոյ մտաւիութիւնը՝ ինչ որ տարիներէ ի վեր գրաւած է մեր երկրի ժողովրդեան մէկ մեծամասնութեան հոգին:

Թուրք թերթերէն ոմանք այս զէպքին պատճառ ցոյց կուտան Պուլկար յեղափոխական չէթէներու դործունէութիւնը: Մենք ընդունելով այդ պարագան, և Պուլկար չէթէներու այս ձեռնարկը ն'ատելով հակամարդկային և յեղափոխական ծայրայիտ թիւն մը, կ'անդրադառնանք ժողովրդեան այն մասին հոգեկան տրամադրութեան՝ ուր այսպիսի պտրագաներու ներքեւ կը յառձախ իր հարեանին, իւր երէկուան բարեկամին, դրացիին վրայ, և փոխանակ անոց ցաւերուն հաւակից ըլլալու, կամ անոր գոգոհութիւնները լսելով իբր բարեկամ և դրացի օգնելու՝ ինքն ալ կը քանդէ, ինքն ալ կ'սպաննէ, կը թաղանէ. և երկրին շիզը ու անոր կեանքը եզոզ անտեսականը կը փճացնէ՝ տրտազրոյ ձեռքերուն հետ միատեղ:

Այս այսպէս եղած է դարերէ ի վեր, այսպէս եղաւ սուլթան Համիտի օրով և այսպէս կ'ըլլայ դեռ Սահմանադրական վարչութեան մը ձեռքերուն ձեռք:

Հետեւաբար մենք կը տարուինք խորհելու թէ ի՞նչ են այն հիմնական պատճառները որ հակառակ այսպիսի զէպքերու յառաջ բերած անտեսական տագնապ-

ներու, քաղաքակիրթ աշխարհի քննադատութիւններուն և զայն վարող անձերու իսկ ախար դէպքի մը միջոցը բլլալուն անկեղծ խոստովանութեանց՝ դարձեալ կը շարունակուի նոյն ընթացքը և նոյն ոգին:

Մենք այսպիսի պարագաներու ներքե կատարուած դէպքերու պատասխանատուները կը նկատենք ո՛չ թէ ժողովուրդը, ո՛չ թէ այդ ոչխարային համակերպութիւնը ունեցող տարրը, այլ զանոնք վարելու կոշուած պատասխանատու մարմինները:

Մենք փորձառութեամբ դիտենք թէ հակառակ ժողովուրդը դժգոյ և իրենց աւարառութեան ու ոճրագործութեան բնածին տենչէն մշտաւ ժողովրդային քաջալերութիւններու, եղան բաւի զգուցման տէր, ընտանիքի հայրեր, որոնք իրենց կեանքն իսկ վրայ տալու պատրաստակամութեամբ իշենց պաշտօնին ամբողջ ուժովը ու գիտակցութեամբը գիմադրաւեջէն ու հերոսաբար պաշտպանեցին իրենց հսկողութեան յանձնուած շինարար ու արտադրող ձեռքերը ու այս կերպով ծառայեցին հայրենիքին: Սակայն սրտի դառն ցաւով պէտք է ըսենք թէ ասուպի նման երեցող այսպիսի գիտակից պաշտօնեաներ փոխանակ քաջալերուելու ու վարձատրուելու և պաշտօնի բարձրացում ունենալու, առէն կերպ հալածանքի կ'ենթարկուին: Առանայի դէպքերուն առթիւ, յիշնապետ մը որ իր ազդեցութեամբ պատճառ դառցած էր հաղարաւոր կեանքերու փրկութեան, ամբողջ ժողովրդեան և անոնց առաջնորդներու ստորագրութեամբ կեղբորնի կառավարութենէն պահանջեցին անոր պաշտօնի բարձրացումը, թուելով ըրած զոհողութիւնները ու հերոսական կռիւները փոխանակ լսելու մահաբնէ աղաւաղ ժողովրդեան մը երախտագիտական խնդրումը և նկատի ունենալու բաշտմարտիկ սպայի մը աստիճանի բարձրացման իրաւունքը, զայն վարձատրեցին պատճառանկութեամբ: Այս եղաւ սահմանադրական վարչութեան մը օրով, և եղան նաեւ տեղի հրաշայիները...: Ասոնք եղան նախկին վարչութեան օրով, և այս ու այսպիսի դէպքեր որոնք ամէն օր կը կրկնուին մեր դժբաղդ հայրենիքին մէջ, պատճառ դառցան ժողովրդային դժգոհութիւններու: Փոխուեցան վարչավարչութիւնները, սակայն փոխուեցա՞ն արդեօք վարիչ ու ժերու մտայնութիւնները, այդ պէտք է յոյս տան գործնական միջոցները: Կը յիշէ՞ք մինչ այժմ մէկ հատիկ պաշտօնեայ՝ որ պատասխանատու նկատուէր իր անհոգութեան պատճառով յառաջ եկած աղէտներու: Սակայն հակառակ կողմին փաստեր շատ են:

Մեր վաւիշները պէտք է բմրոնեն թէ մեր երկիրը կրնայ փրկուիլ նախ և առաջ անհոգութեան վերահաստատումով: Բ. միջտարբեան այս մտայնութեան ջնջումով և Գ. Ընդհ. փոփոխութեան համար անտեսական յարաբերական միջոցներ տեսգծելով: Այս կ'սպասենք մեր ներկայ վարիչներէն, այլապէս՝ ուր ուր կ'ենք հոն պիտի մնանք և ընչ մալ ետ դացած: Եւ ինչ որ երէկ կը քննադատէինք մեր ընդդիմադիւնները իրենց սխալին համար, այսօր իրենք սխալ քննադատուին եթէ, Եւրոպայի դէպքին հեղինակները չի պատմուին: Մ. ԻՓԷ.Բ.ԵԱՆ

ՕՏԱՐԻՆ ԵՏԵԻՆ ՄԻ ԵՐԹԱՐ

«Մեր փոշը օտարին վարդեն լաւ է» (ատած)

Բաւական երկար գրութիւններով ու նախապաշարով ապացուցուեցաւ թէ ի՞նչ է այդ բարբարոս՝ ժեզուիք Pèrè երու հոգեբանութիւնը։ Ի՞նչ նորկիւն բռնադատուած անոնք՝ ի սփռու աշխարհի գրուելով՝ չիք չիք հաստատութիւններ չինած են և զեռ կը շարունակեն ընդարձակել զանոնք առջինէն աւելի փայլուն։ Թերևս բարի նպատակի մը համար եղած ըլլար ան՝ մենք չէինք վարանիր այդ բարբարոս նայրերու ըրած՝ ծառայութիւններու կրուատիքն ընելու, հրապարակուելով երբէք գործնական ապացոյցներով հասկցած չ'ըլլայինք անոնց կէս նպատակին, մ'ը աչքերով տեսած չ'ըլլայինք անոնց ծուղակին մէջ իյնող պատանիներու կրուատիքներ, Թագէտոյ գիրկէն Պետրոսի գիրկը նետուելը՝ ոմանք նիւթական և ոմանք ալ բարոյական ակնկալութիւններով։

Ներկայիս աւելորդ չենք համարիր այդ կէտերը աւելի ընդարձակորէն պարզելու։ Ասկեղ Համիտի բռնակալութեան չորջանին, երբ մեաւիճի կողմէ տմէն տեսակ ճշդումներ հայ վարժարաններու վրայ ի գործ կը գրուէր՝ ի հարկէ բռնադատուած մեր վարժարաններու ծրագիրը սեղմ վիճակ մը ունէր, մոմաւանդ Ազգ. պատմութիւնը զաղտագողի և շատ համառատակ, աւանդուելուն՝ նոր սերունդի մեծ մասը անգիրտակ մնաց ըր առնային պատմութեան։ Յաջորդաբար եկած նեղութիւններ, քանտարկութիւններ, առը ու հուր, որոնք խեղճ հայ Ազգին միայն ճակատագրուած էին՝ հայու սրտին մէջէն մասամբ մարեցին ազգա—կրօնական ըզգացումները։ Այն հայը որ առաջ իր արիւնը տուած էր ազգին և իր Ս. կրօնքին՝ ալ ևս իր նախնիքներուն պէս չէր խորհեր, անիկա առատաձեւն ծնողքի մը

ժլատ զաւակը դարձած էր։ Անոր նախնիք արիւնի գինով և տմէն տեսակ զուհոգութիւններով կառուցած էին բարեգործական հսկայ հաստատութիւններ և զանոնք կառավարելու համար հաստիքներ աղբիւններ հաստատելու։ Սակայն, ժամանակի պահանջքին համաձայն գոհացուցիչ գպրոց մը կառավարելու համար այդ հաստիքները անբաւական ըլլալուն՝ հարկ եղաւ քիչ թէ շատ բարեկեցիկ զաւակարգէն տարեթոշակ զանձել։ Ծիշտ այս վայր կեանէն սկսեալ Pèrè երու ճացին կուտգ իւր խուեցաւ, անոնք օգտուելով այլ բարեպատեհ առթիւն՝ սկսան իրենց դոմնենները խոշոր խոշոր բանալ. որովհետեւ շատ մը նիւթապաշտ ծնողքներ — որոնք չէին վարժուած իրենց զաւակին կրթութեանը համար դրամ վճարելու, ամենաջնջին տարեթոշակ մը չի վճարելու համար սկսան իրենց անմեղուկ փոքրիկները ըրեն, ձեռքով յանձնել ժեզուիք Pèrè երու և Տօւրեբու, որովհետեւ հոն ձրի էր, որովհետեւ հոն դաստգրքի դրամ չկար, ձրի դեղատուութիւն կ'ըլլար հրանդներուն, ամէն ինչ ձրի անուան ունէր, թէ և անուղղակի կերպերով շատ սուղի կը նստէին իրենց (ծընողաց) վրայ։

Այս անակնկալ յաջողութիւնը առիթ տուաւ փեռերուն՝ իրենց ծրագիրը գործադրութեան դնելու։ Ուստի ժամը հասած էր, որովհետեւ ջուրը պղտորած էր. սկսան ամէն տեսակ ճշդում ի գործ դնել հայ ուսանողներուն, որոնք հարկադրուեցան առտուն շատ կանուխ երթալ ներկայ գտնուելու համար Լտտին եկեղեցական արարողութիւններու և յաջորդաբար կատարուած մէկ քանի պատարագներու։

Իրիկուան շատ ուշ պիտի արձակուէին երկու գլխաւոր ու զիտումաւոր պատճառներով։ Ա.— Որպէսզի հայ ուսանող—

ներ ներկայ գտնուին իրենց երեկոեան ժամերգութեանց: Բ.- Որպէսզի հայ ժամերգութեանց իրիկուան պահն ալ անցնէր: Աւելին կայ: Եւ որպէսզի կիրակի օրերը տղան իր հօր հետ եկեղեցին չներթայ, կիրակի օրերու համար պարտաւորիչ ըրին արեւածագին ներկայանալ վարժարան, կիրակեօրեայ դաստիարակութեան պատրուակին ստակ, իսպառ զրկելու համար հայ մանուկը իր հարազատ եկեղեցիէն: Եւ որպէսզի հայ լեզուն, հայ պատմութիւնը, հայութիւնը բոլորովին մեռնի հայ մանկան սրտին մէջ, իսպառ արգիւցին հայերէն խօսիլը նոյն իսկ դրօսանքի պահերուն: պէտք էր ֆրանսերէն սորվիլ, ֆրանսերէն ուսել, ֆրանսերէն խօսիլ, ֆրանսերէն վնասիլ, ֆրանսերէն...: Լատին կրօնի գիտութիւնը ֆրանսերէն լեզուով սորվելու պարտքին անհրաժեշտութիւնն ալ չի մոռնա՞նք յիշելու: օրական քանի՞ անգամ արդեօք ստիպուած էր ազան յեղյեղելու կայր Մարտար, հայր Յովսէփը, կայր Մարիամէն, Անտոն արքան, Ագոստ կոյսը, Ագոստ կոյսը, Տորթէ, Կատարինէ, Մարգարիտ, Ֆրանսէն, Ռոզա, Կրիսթին, Թերեզ, Ռոզա, Չրիլի, Մարքըսը կոյսերը և այլ սրբահիւնները բարեխոսութիւնը հայցել ֆրանսերէն լեզուով՝ որոնք ժամանակին ինչ մեծամեծ ժողովութիւններ մատուցած ըլլալու են յանգուշտ...: Եթէ բան մը ունին զանց ըրած սորվելիկու աշակերտին՝ այն ալ չեն գտնուիր որպէսզի պատարագի պահուն երկնային հրաշքով մը ծնած որդիին պատմութիւնն է...: Չունք ուզեր աւելի առաջ երթիլ...:

Եւ այս պէս ֆրանսերէն լեզուի յեղյեղումով թէև աշակերտը ֆրանսացի մը կ'ըլլար, ինչպէս իր ծնողքին, միևս կողմէն Լատինականութեան սերմը տակաւ առ տակաւ ածիլ կ'սկսէր մոտակայ սրտին մէջ՝ մարելով միանգամայն հայ ազգակրօնական եռանդը:

Թէ ինչ պատճառներով յայտնուեցան քիչ մը վերը պատմուած ոճրագործութիւնները, կարծէ որ քանի մը խօսքով ծանօթացնենք մեր ընթերցողներուն:

Փետրը, ինչպէս սեօները, իրենց յաջողութիւններուն զագաթնակէտին հասած ըլլալով, սկսան բացայայտ կերպով օրրտան անգամ տղային առաջարկներ ընել Լատին կրօնքը ընդունելու համար: Անոնք որ ապառաժի վրայ ինող սերմերէն՝ համակերպեցան և այսպէսով շատ հայ աղաքներ ինչպէս նաև աղջիկներ ընդունեցի՝ փրկաւէտ կրօնքը, որմէ դուրս չի գտնուիր... կ'ըսէին. իսկ շատեր ալ, երկու բառ ֆրանսերէնի փոխարէն իրենց վրայ առած մայրենի լեզուն հետ վրայ չտալու համար հայրենի կրօնքն այլ լեզուով ժեզուելով վարժարանը՝ զիմեցին Ազգ. վարժարան: Իրենց առջին լարուած որոգայթէն հազիւ հող աղատող այդ անմեղուկ պատանիներն են որ երեւան հանգին, խառնովանեցան մեզու իր փետրու, սեօներու հոգեբանութիւնը, որ կը կաշանար ճիշտագէտ մարդկութեան ծառայելու քղին ստակ ծածկուած մարդոսութեան մէջ:

Ո՞վ ընթերցողներ

Ահաւասիկ ամէն ինչ մտնրամտնորէ պատկերացուեցաւ ձեր առջև: Կարդացէք նաև «Իրիս» ի 1, 2, 3, 4 թիւերն ալ այն ասեմ չառ լաւ նիւթ՝ ճանչնաք Ձեր սխալը, եթէ ունիք ազգային նորժանապատուութեան նախանձամիտութեան ոգին: Խնայեցէք ձեր գումակները սոյն սերումէ, եթէ ծնողական գոթիք և պարտականութեան գիտակցութիւնն ունիք: Բացէք ձեր քսակները գումակնուղ մայրենի կրթութեանը համար: Որտեղ մէկ տոմսոց չի վճարելու համար մի՛ նեղեք զանոնք օտարի մը գիրկը՝ որ դարերէ ի վեր Ձեր սխալով թշնամին է: Վկայ հայ

եկեղեցական պատմութիւնը:

Անցած են այլևս զուլումի դարերը: Ձեր զաւակները թող ազատ կերպով կարգան իրենց ազգային եկեղեցական պատմութիւնները: մի՛ կարծէք թէ այդ դպրոցները՝ ժամանակուան ծաղկող-խամրոցներն են. ո՛չ. ինն ամեն տեսակ լեզուներ ու գիտութիւններ, մանաւանդ ձեր այսօրվան սրտած ֆրանսերէնը չա՛տ լաւ կ'աւանդուին. որովհետեւ, ձեր զաւակները

իրենց հարազատ մօրը ստիճաններէն է որ պիտի ծծեն գիտութեան ու բարոյագիտութեան մաքուր կաթը, ո՛չ թէ խորթ մօր մը ստիճաններէն՝ որ չաղախուած է ատելութիւնով: Մի՛ խնայէք ձեր քրտինքներուն, այլ՝ խնայե՛լէք ձեր զաւակներուն, որովհետեւ անոնք են որ ի՛նչ ձեր և թէ բոլոր հայութեան ապագայ փառաշէն պատկերը պիտի հիւսնէ:

ԽՈՐԷՆ ՔԷՆՅ. ԳԱԼԻՈՂ ՃԵԱՆ

ԱՇՆԱՆ ՏԵՐԵԻՆԵՐ

Աւան ՏԵՐԵՆԵՐ, ոսկի ՏԵՐԵՆԵՐ,
Շաւ կը նրմանիք իմ երազներուս,
Որոնք հոգիէս շուշուր հեռացեր,
Վաղուց բողբեր են սրտիկիս անյոյս...

Ձեզ շա՛ւս կը սիրեմ, պահած եմ ձեզմէ
Շատեր գիրքերու մէջը գաղտնիքս:
Սրտիս մէջ հիմա միայն աշուճ է՝
Ձոր անխառն սրտանց, ուժգին կը սիրեմ:

Ձե՛ որ ան սրտիս յոյսերուն նրման
Տըխուր ե անպէ՛ս, անկե՛ղծ, մրտէրիմ,
Ձի՛ յիշեցներ գաւունն երեկուան,
Նւ չլնալ վարդերն անցած մայիսին...

Ձի՛ յիշեցներ յոյսերս ալ մաւրած,
Թե՛ որ մ'ալիքներու սիրուն խաղաղութիւն
Անհեղութեան մը ցոլքերն անկասկած
Կը շողոքային շաւս պայծառօրէն...

Ձեզ պիտի սիրեմ շաւ անկեղծաբար:
Եւ միայն կ'ուզեմ խաւարի սիրել,
Կրեւամ' ձեր գոյարիկ անցեալը մոռնալ,
Աւան ՏԵՐԵՆԵՐ, ոսկի ՏԵՐԵՆԵՐ...

ԱՐՄԷՆ-ԵՐԿԱԹ

Բազ Նամակ

Ուղեւայ տու «ԱՄԱՍԻԱ» Կիսամսեայ Հանդէսի Պատ. Խմբագրութեան

Տիար Խմբագրապետ,

Մարգարտունէն դէպի Ամասիա ճամբորդութեան խոնջէնքէն հաղիւ թեթեւ շունչ մատած էի՝ երբ ինձի կը հաղորդուէր տխուր իրողութիւն մը: Պահ մը անհատատալի կ'երեւնար ինձի. չէի ուզեր հաւատալ, բայց՝ «այս տղապէս է» կը պնդէր խօսակիցս, որուն կը ձայնակցէին ուրիշներ ալ: Մեր խօսակցութեան նիւթը կը դառնար Գեր. Տ. Թորգոմ Սրբազանին շուրջ՝ որուն երկարատեւ բացակայութիւնը մեծ տխրութիւն և մտահոգութիւն պատճառած էր Սեբաստացիներուն, և Սրբազանը այս անգամ իրեն միտիւթարութիւնը տալու համար կը վերագառնար իր պաշտօնաստեղին՝ լուրջ ու համեստ

ճամբորդի մը պարզութիւնով: Նա, Ամասիա մտած էր շատ անշուք կերպով:

— «Տէր հայր, այս բանը մեզի անպատուութիւն չէ՞ միթէ», կ'ըսէր խօսակիցս պարզ արհեստաւորի մը անկեղծութիւնով:

— «Մեր Ազգին ամօթ չէ՞ր միթէ» - կ'աւելցնէին ռուբիններ - «որ թող գոմ Սրբաշանի պէս եկեղեցական մը, հասարակ պանդուխտի պէս պանդուխտ մնայ գիշերելու համար. միթէ չունէինք առաջնորդարան, մեր եկեղեցիները սենեակներ կը պահէին Սրբաշանը հիւրասիրելու համար»: Այս էր այդ համատարհ արհեստաւորներու յանկերգը՝ որ կը կրկնէին ողբան տխրութիւնով՝ նոյնքան ալ անկեղծութեամբ:

Տո՛ւր իրողութիւն, որ պատիւ չի բերեր հայ ազգին: Գիտութեամբ գործուած սխալ մը՝ որ պատիւ չի բերեր հայ եկեղեցիին. մեռելային անտալքելութիւն մը՝ որ չի կրնար արգարանալ և ոչ մէկ պատճառարանութեամբ:

Եւ ա՛յլքան պաղ վերաշերտ, հանգէպ այն տեսակ եկեղեցականի մը, որուն անունը պատիւ կը բերէ եպիսկոպոսներու շարքին, և ընդհանուր հայ Ազգին:

Ռամիկ կարծուած հայ արհեստաւորը գիտնայ յարգել իր եկեղեցիին տեսուչը՝ և նոյն այդ եկեղեցիին պաշտօնականները չի հաճի՛ն նոյն յարգանքը ընծայելու իրենց պետին: Ի՞նչ հակասութիւն: Կղերատեսաց կարծուած հասարակութիւնը ուզէ սիրել և պատուել իր եկեղեցականները՝ և նոյն այդ ժողովուրդին ձայնը ներկայացնող կղերականութիւնը անախատնէկի տառնութեամբ վերադերուի հանգէպ Գալաթիանի պէս Սրբաշանի մը՝ ոչուն անունը ո՛չ միայն թիքահայոց, այլ նաեւ Ռուսահայերուն ծանօթ է: Նա, իր իմաստայն առնականութիւններով համերաշխութեան հրաւիրած է Կաթողիկոսական ընտրութեան պատգամաւորութիւնը՝ որ երէք բնութիւններու թըմբուկը կը դանդաղէր զաղտնապէս. և ամբողջ հայ Ազգին ձայնը ներկայացնող այդ ժողովը հիացած, զորմացած է անոր երկնածիր տաղանդին և մեղրամոր լեզուի արտաշերտութիւններուն վրայ: Վկայ են խօսքիս Ռուսահայ թերթերը, որոնք երկար գնահատականներ բրած են Սրբաշանի արժանիքին, վրկայ է թողաոթի տնտեսական պատգամաւոր Ռուսահայը՝ որ Սզգ. բնդհ. ժողովի (թողաոթ) դրած իր մէկ պաշտօնական նամակովը կը յայտնէր թէ թորգոմ Սրբաշանն ո՛ր աստիճան հիացուցած է Ռուսահայութիւնը՝ թողելով իր անունն եւսին թիքահայ բարձր եկեղեցականի մը համար:

Մեք հոս չենք ուզեր Սրբաշանին կենսագրութիւնն ընել. Նա արդէն սմենին ծանօթ է: Ան, մէկ գիշեր պանդուխտ մնալով իր արժանիքէն բան մը չի կրնայնելէն զատ՝ ապացոյցը տուաւ իր խոնարհութեան: Այն բանը որ պարտաւոր էր ընելու ու չ'ըրաւ Ամասիայ հոգեւոր իշխանութիւնը՝ Սրբա-

զանքն անունին երբէք արատ չի բերել: Այն պատիւը զոր պարտաւոր էր տալու ամասիայի եկեղեցականութիւնը, ինչ որ չ'ուզեց տալ, Սրբազանին պատիւէն բան մը չի պակսեցուց. այդ պատիւը ուղղակի մեր ազգին պատիւն էր որ անպատուեցաւ օտար ազգերու միջև, քանի որ նա մեր Ազգին ներկայացուցիչն էր. այդ անարգանքը հայ եկեղեցիին անունին ելաւ. քանի որ նոյն եկեղեցիին մէկ բարձր պաշտօնեան էր Թորգոմ Սրբազան:

Մեծապէս կը սխալին ամէն անոնք որ կը կարծեն թէ ես կ'աշխատեմ Սրբազանին խնկարկութիւն ընել, անոր տխրակեր չալիով. և նոյնքան կը սրբային անոնք որոնք կը կարծեն թէ Սրբազանէն ոեւէ ակնկալութեան նպատակ ունիմ, ոչ, ես կընամ անկեզծօրէն յայտնել թէ անկէ ոեւէ ակնկալութեան նպատակ չունիմ: Ո՛չ գաւազանի իշխանութիւն, ո՛չ ծայրագունութեան ատրիճանի, և ո՛չ ալ մի իւղոտ պատառի (տեղապահութեան կոմ առաջնորդութեան) և ո՛չ մէկ բանի, ինչու որ պարզ քահանայ մըն եմ: Իբրեւ եկեղեցիի մը մէկ պաշտօնեան երբէ՛ք չեմ քաշուիր հրապարակաւ յայտարարելու թէ, Ամասիայի եկեղեցական իշխանութիւնը ամօք բռնու երբէ՛ք չեմ վարանիր բռնու թէ այս օրաւոր տխուր իրողութիւն մըն է՝ որ երբէք պատիւ չի բերեր Ամասիայ ՀՈՒՆԵՐՈՒ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ:

Եւ այս տպերը, զորս ցաւ ի սիշտ կը գրեմ, արդեօք անկեղծութիւնս եթէ ոչ յանդգնութիւնս կ'ապացուցանեն, եթէ երբէք սխալ խորհողներ ալ գըտնուին ընթերցողներէն,

Ազգեօր Թորգոմի հոգեւոր իշխանութիւնն ալ հետեւեցաւ այդ սխալ և անպատեհ գրութեան. — չեմ կարծել: Նոյնատ լաւ գիտէ յարգել իր մեծերը պատուել եկեղեցականները, ինչու որ ես ինքս ալ Թորգոմի մըն եմ:

ԽՈՐԷՆ ԲԶՆՅ. ԳԱԼԻՍՆՃԵԱՆ

ՊՐՈԼԷՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿԻՐՆԵՐԻ ՄԻԱՑԷՔ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

ՀԱՐՔԵՆԱԿԻՑՆԵՐ

Առկից սուղ քաղաքիս Գաղանճի բանւորներու և փառապաններու միջև որակաւ Գ կամ 10 ժամ աշխատութեան խընդրայ մի մասին ծագած անհամաձայնութեան հետեւեցաւ խնդրանքը ժամանակի մը համար բանդոյ բրած էին: Ս. Դ. Նիզակեան կուտակութեան Եղեղիոյ Մ. Ճիւղը Վարչութիւնս կարգ մը Գաղանճ

բանւորներու հրաւերին վրայ միջամտած էր խնդրոյն և որակաւ 10 ժամ աշխատելու պայմանաւ բանւորներն համոզած և գործի ձեռնարկելի սուած էր:

Համարաշխութեան երեք շաբաթ վերջ բանւորներու միահամու գործադուլը կուտակութեան համար անակնկալ մը եղաւ: Բնական էր թէ վարչութիւնս

անտարրեր չպիտի գտնուէր այս առթիւ ալ և իրեն աւագ պարտականութիւն նշկատեց ռաւմաթիւրի գործադուլը առաջ բերող պատճառներն և ճշդել պատասխանատուները :

Վարչութիւնն իր կատարած խղճամիտ քննութիւնէն եզրակացուց թէ՝

Ա. — Գաղանձի բանւորները յանձնառու կ'ըլլան տարուան ամենէն տաք երեք սեփիսները — այն է Յաւնիս, Յուլիս, Օգոստոս որական 10 ժամ աշխատիլ, պայմանաւ որ օրէքը տնփոխիս մնայ :

Բ. — Մանսիս ատեն օրէքը չափաւոր գեղջի մըն ալ կը յոգարին, և թէ երեք վաճառականները յանձնառու ըլլան նոյն համեմատութեամբ գեղջի տպրանքը գինէն, օրպէսզի սպասուէր շատ լիայ և առատ :

Գ. — Վաճառականներն ալ ընդհանրապէս կը պահանջեն որ որական 10 ժամ աշխատելով հանդերձ, միւսէ 4—4 զրոյ գեղջի օրէքէն և տպրանքին գինը միայն տնփոխիս :

Վարչութիւնն այս երեք նկատումներով համոզում գտնացուց թէ Գաղանձի վաճառականին կողմէ բանւոր դատակարգին վերադրուած ծախարիզութիւններն թոյլոն ալ սուս և շինու ևն, և աչքի փոշի փըշելու կը ծառայեն :

Վաճառականը այդ ստացող տարածայնութիւնը հանելով հետեայ չափերն կ'ուսենար :

Ա. — Հաւատացնել հետաքննակ Գաղանձի վաճառականներուն թէ բանւորական դատակարգի օրէքի յաւելում պահանջած ըլլալուն համար տպրանքը սուղի մալ եղած է :

Բ. — Իր պատրաստի ունեցած տպրանքը սուղի ծախի և կրկնապատիկ, եռապատիկ բարդումով սպառել :

ՀԱՅՐԵՆԱԿԻՆԵՐ,

Ինչպէս կը տեսնուի վաճառական դատակարգի ընչաքայց նկատումներէն, ա-

նոնք կէտ նպատակի ըրած են օրէքներն տպրիսի կերպով զեղջիկով քմահաճօրէն տկարացնել բանւորներն ու իրենց ազդեցութեան տակ առնելով զանոնք, խըլել բանւորեն ձեռքէն իր չորաբիկ հացագինն ալ :

Այս տեսակէտն աչքի առջև ունենալով վարչութիւնն ջանաց ազդու միջամտութեամբ մը վերջ տալ սոյն անբաղձալի գործադուլին, որուն հետեանքով թէ բանւորը, թէ վաճառականը և թէ մանուկ Գաղանձիական ճարտարարուեստը կը տուժէր առնուսարակ, բայց երբ տեսնուեցաւ թէ վաճառական դատակարգը իր տեսակէտէն նշանախից մ'անգամ չի գտնու, խղճը պարտք համարեց պարզել խոգիրը իր մերկութեամբ հեռաբնակ Գաղանձի վաճառականներուն, օրպէսզի յետաքննակ ստացող նախկիններուն և չի համոզուին անոնց կեղծապատիւ յերեւումներուն :

Պարզիկ օրինակ մը կը բաւէ մեր խոսքը աւելի փաստելու :

Առկէ շուրջ մէկ տարի առաջ երբ տեղւոյս Գաղանձի բանւորները լիարի գլուխ 8 փրյ. բանւորացիի յաւելում ուղեցին և գոհացում գտան, փոխանակ 8 փրյ. ի հաշւով 5 զրոյ. 10 փրյ. բարդելու գնոյն վըրայ տպրանքին, 10 զրոյ. 20 փրյ. բարդեցին և այնպէս համոզեցին իրենց յաւախորդները թէ 10 զրոյ. 20 փրյ. ի համեմատութեամբ բարդում եղած է բանւորացին վըրայ, մինչդեռ ինչպէս կը տեսնուի 5 զրոյ. 10 փրյ. միայն տարբերութիւն ունեցած է տպրանքը. որով վաճառականը գործաւորներու պահանջքը պատրուակ բռնելով կրկնապատիկ չափ ըրած է իր տպրանքէն :

Արդ վարչութիւնն նկատելով որ Գաղանձի վաճառականներուն բանւորներու օրէքներէն զգալի գեղջի առաջարկը տպրիսի է, նկատելով որ խղճի ու մարդ-

կոտին օրէնքի զէմ եղած բացարձակօրէն քմահաճ կարգադրութիւն մըն է այս եղածը, նկատելով որ վաճառականները կը ձգտին բանւորին արդար իրաւունքը հեռացնելու նուազցնելով իրենց բաղդը չլինել, նկատելով որ բանւորին օրէնքներուն կրօնքով զեղջիւրէն սրեւէ օգուտ չունի ոչ ճարտարարուեստը և ոչ ալ հեռաքնակ վաճառականը: Կամ յաճախորդը և վերջուպէս նկատելով որ այս ընթացքով հեռացնուեալ

պիտի տուիէ Գաղանճրական ճարտարարուեստը, բանւորներու արդար իրաւանց անխախտ հիմին վրայ կանգնած և ընչազուրկ ու յաւէտ զրկեալ դասակարգին վիճակին բարեկաման ջերմ բողձանքով կուգայ հանրութեան նկատման յանձնել վերոնշտակեալ պարագաներն իրենց մերկութեամբ և քուռն կերպով բաղաճկ գործաւորներու փճացումը պատրաստող անխիղճ կարգադրութիւններուն դէմ:

Ս. Դ. ՀՆԶ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԵՒԴՈԿԻՈՅ ՄԱՍՆԱՃԻԴԻ ՎԱՐՉՈՒԹԻԻՆ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԱՄԱՍԻԱ

ՄԱՐՉՈՒԱՆԻ

Իրևան Ստալկոբոյական

Հատաւ 623

Ամասիա 7 Oghusnu 1912

Պատ. Խմբագրութիւն «Ամասիա» ի

Հոտ

Երէկ ցոյց տուին ինձ Ձեր թերթին վերջին թիւը, ուր, ՚ի միջի այլոց, կարգ մը անաղիք քննադատութիւններ բրած էիք իմ մասին, ասկէ առաջ, ինքնարիւրաբար ինձ զրկուած «Ամասիա» թերթումը դադրեցնելու համար՝ Ձեզի ուղղած մէկ տոմսիս թուականը՝ նոյն օրը Ձեր ձեռքն հասած մի ալ տոմսի թուականին հետ զուգադիպելուն համար, Խմբագրական և հանրային կեանքի մէջ անգիտելի աշխատութեան զուգադիպութիւնը պէտք չէր որ զձեզ զայրացնէր և մեր հասցէին ձրի թերթ գրկելու անհարկի գոտարկութեան ենթարկէր... Իբր թէ՛ մեր հօտին քննադատական ձայնը մեզի լսելի ընել տալու պատրասակով: Մեծապէ՛ս շնորհակալ ենք. Ձեր այդ մատասներբորդ ժամու ակամայ նուէրը

չենք ընդունիր, ինչպէս նաեւ չենք ընդունիր Ձեր լինքնակոչ թորգժանի հանգամանքը մեր «հօտի» ձայնին, որովհետեւ դուք, պ. պ. Խմբագրապետ և Արտօնատէր «Ամասիա» թերթի, երկուքնիդ ալ մեր «սեփական հօտի» ձայնը չէք ներկայացընիր:

Դառով ասկէ առաջ Ձեր թերթի բաժանորդագրութիւնը դադրեցնելու պատճառին, ասիկայ լսի անձնական խնդիր մի ըլլալուն, տոմսիս մէջ բան մը ըսած չէի, և դուք իրաւունք չունէիք այդ մասին օգային ենթագրութիւններ ընելու: Առանց բաժանորդագրուելու, ինքնաբերաբար մեր հասցէին զրկուած թերթերէն ալ ձանձրացանք: Այս առթիւ միտնեալ մեզի միջոցաւ հրապարակու կը յայտարարենք ամէնքին, որ բարի ըլլան առանց

խնդրանքի՝ թերթ չի ղրկիլ և բաժանարդ չի նշանակիլ մեզ, որովհետեւ, մեր պաշտօնական ծանրածանր զբաղումները թոյլատու են պանոնք կառուցուլ: Բայ տա՛տ, երբեմն անոնց առաջնորդարանիս և մեզի նկատմամբ հրատարակած սուտ ու սխալ յուրերն հերքելու և կամ «բաց նա՝ մակնորու» պատասխանելու համար, 'ի դուր ժամավաճառ կ'ըլլանք: Օրինակ, հէնց այս անգամ, «Ամսօր»ի վերջին թիւին մէջ, Մարգուանի Ս. Սահակեան Վարժարան: Ուսուցչական ժողովն երեսփոխանական գերագոյն ժողովի հովեր առնելով, նաժակով մը կարգ մը հարցումներ կ'ուղղէր մեզի, որուն ասկէ առաջ աւելորդ համարած էինք պատաս-

խանելու, և այժմ այ՝ չենք գիշտիր: Միայն խորհուրդ կուտանք այդ Պատկաճառին, որ իրենց հարցումներն ուղղեն իրենց Պատ. Աստուածային, և տարւոյն Ապրիլի 9ին, Բշ. օր, յատուկ պատգամաւորութեան մը գլուխն անցած, մեզ ընտրական հրահանգներ տալու համար Չարխաւիան Ս. Աստուածածնէ: Վանք՝ և կող իրենց ընկեր ուսուցչին:

Հաճեցէք ներկայս հրատարակել «Ամսօր»ի յառաջիկայ թիւին մէջ նոյնութեամբ:

Մնամք աղօթարար

Առաջնորդ Ամսօր-Մարգուանի

Գէորգ Մ. Վ. Իբրանսեան

Հրատարակելով ներկայ գրութիւնը՝ խնդրուիլովն ալեւք կ'զգայ կարգ մը լուսարանութիւններ և ուղղութիւններ տալու Ձեզ՝ որովհետեւ զեռ շատ հետի էք ժողովուրդ մը տխուրեց ձիրքերէն և կուտուցութիւններէն: հետու վարկերու մէջ Ձեր սենեցած պաշտօնավարութեանց քնննադատականները երբ կը կարգախնք թերթերու մէջ, չափազանցութիւններ կը նկատուինք անոնք. այսօր այ Ձեր անդիս մէջ աւանցած պաշտօնավարութեան քննադատողներ պիտի չ'ընենք՝ ան թողով այն ժամանակին՝ երբ խմբագրութեանս կողմէ որոշուլ: միայն քանի մը տողով պիտի անդրադառնանք Ձեր նամակին այն պարբերութիւններուն՝ որոնք ուղղակի թերթիս ուղղութեան պէմ կը նկատենք:

Նայի, կ'ուզենք հարցնել Ձեզ թէ Առաջնորդարանը, անբերը և անոր թուահամարը որ գործածած էք, այդ իրաւասութիւնը ո՛ւրիկէ առած էք Ձեր անձնական գործերուն գործածելու համար: Եթէ ժողովի մը որոշումով գրեցիք՝ այն ատեն Ձեր գրութեան ներքեւ պէտք էր

գրուէր որ ժողովի որոշումով գրուած ըլլալը: մինչդեռ տա չկայ, և Ձեր գրութեան լոյթաչքը կը չեղտէ թէ անձնապէս գրած էք: Հետեւաբար պարտաւան էք Ձեր այս գլուխի շահագործման բացատրութիւն տալ:

Երկրորդ, կ'ըսէք թէ «Ամսօր»ի իրաւագրապետը և Արտօնատէրը որովհետեւ Ձեր հօտին չեն պատկանէր, հետեւաբար իրաւունք չունին զՁեզ գնահատելու կամ քննադատելու: Իրօք, Հայր Ուսուցչ. Դուք այդպէս կը խորհիք. Ձեր տարմտածո՛ւնն է այդ, թէ զայրացած մէկ պահերնուզ Ձեր մօտ գտնուած մի քանի պնակալէզներու մտայնութեան ազդեցութեան ներքեւ գրեցիք: մենք կ'ուզենք հաստատել թէ վերջինն է. որովհետեւ այդ ըսել պիտի ըլլար թէ պէտք է նայիլ թերթերու իմաստաբար պնակներուն և Արտօնատէրներուն կրօնական վերաբերման և այդ կերպ դատել իրերը: Զօր օրինակ. երբ յիշ օրաթերթերէն մենք քննադատական մը պրէ Ազգային խնդիրներու շուրջ, Պատրիարքարանը պէտք է նայի թէ այդ

Թերթին խնայարար գետը ինչ յարանու-
նութեան կը պատկանի. եթէ Կաթուղի է
է կամ Բողոքական, պիտի ըսէ Ձեր ըսած-
ները չեմ յսեր, իսկ երբ գնահատական
կայ այն առեւն լաւ, ազնիւ են տնտէսը ալ:
Մեր թերթերէն բոլորն ալ վերջերս հայ
Կաթուղիի հասարակութեան մէջ ծագում
առած Թէրթեանի խնդրոյն ասթիւ շատ
բան գրեցին. և Թէրթեան պէտք էր որ
գրեր Ձեզ պէս, (որովհետեւ դուք Հոսիսի
չէք հաւատար այլ Գրիգոր Լուսաւորչին
կը հաւատաք՝ հետեւորար ես Ձեր քննա-
դատութիւններուն տկանջ չեմ տար):
Այո, այդպէս ըրաւ. Թէրթեան մտիկ չ'ը-
րաւ, բայց ինչպէս... Հայր Սուրբ:

Նաեւ կատարութիւնն ալ պէտք է ը-
սէ, քանի որ դուք Իսլամ չէք, հետեւ-
որար ձեր բողոքները չեմ յսեր: Իսկ Սուր-
թեան Համրտ շատ իրաւացի էր Ձեր տե-
սակէտով՝ երբ ամէն բան միայն իր ու-
զամ տեսակէտով կը դատէր և Բրիտանի-
այ տարբին կողմէ եկած բոլոր բողոքնե-
րուն ու քննադատութիւններուն կ'ըսէր,
«դուք իմ հօտիս չէք պատկանիր հետեւ-
որար Ձեր ձայնը չեմ յսեր,» և միւս կող-
մէ իր հօտէն եկած բողոքներն ալ «բէշա-
յին անգթութեամբ ծովերուն յառակը կը
զրկէր. իսկ դուք Ձեր մշտեցիկն ասկի
կը պահէք եկած բողոքները Հայր Սուրբ,
եւ երբ Ամասիոյ մրակ թերթը երկու սող
բան կը գրէ Ձեր մասին, և այն ալ շատ
իրաւամբ, դուք մոռնալով թերթիս մին-
չե հիմակ հետեւած ուղղութիւնը և անոր
կազմին մէջ աշխատողներուն մեծ մասին
Ձեր հօտին պատկանած ըլլալը՝ կ'եղէք և
միջնադարեան մոլեռանդ կրօնականներու
իսկ շատ տեսնուած բացատրութիւններ
կուտաք: Մեր թերթը իր ուղղութեան
մէջ ինչպէս պարզած էր՝ պիտի ըլլար

գաւառի ցաւին ու պէսիին արտայայտիչը
և արտայայտուեցաւ Հայուն, Թուրքին
ու Յոյնի ցաւերով, և կատարութիւ-
նը կը վարմանաք Հայր Սուրբ չէ. չ'ը-
սաւ. թերթին թէ դուք մեր հօտին ձայ-
նը չէք ներկայացներ: Եւ վարմանալի
կը գտնենք թէ դուք մէկէ առած էք
այդ քեօրին երբ կը կարդաք մշտ Սի-
գատամարտը՝ որուն մէջ եւս մշտ կը
տեսնէք քննադատականներ ամէն բանի
շուրջ և ամէն համայնքի հանդէպ, երբ
թերթին վարչութիւնը գտնենք կը նկատե-
հակառակորդական: Արդ այս ասթիւ
պէտք կ'զգանք ըսել Ձեզ թէ՛ Աստուած
պահէ ձեզ՝ Ձեր բարեկամներէն:

Երրորդ, որովհետեւ թերթերու ընթեր-
ցումը Ձեր պաշտօնական ծանրածանր ըզ-
րապատմները կը խանգարեն, հետեւորար
կը յայտարարէք որ Ձեր հասցէին ատանց
ինդորանքի թերթ չի զրկուին: Ո՛րքան
ալ մեծամտութիւն, եթէ Ձեզ չի ճանչ-
նայինք՝ պիտի խորհէինք թէ, որքան ալ
պարտաճանաչ առաջնորդ մը ունի եղի:
Ամասիոյն. սակայն կը հարցնենք Ձեզ թէ
Ձեր գալէն իվեր ինչ բրիգ Ամասիոյն.
այս լրիւ բան մը, եւայն ալ Ձեր երկկի-
մի բնիմացքովը «բաժանէ որ արեւս» ի
քաղաքականութեան հետեւեցաք և յաջ-
ղեցաք: Արդ, Ամասիոյն պէտք ունի յա-
ւաքայն առաջնորդի մը և մօտ է այն
վայրկեանը՝ երբ քու բաժնած ոյժերդ
միանալով պիտի ունենան իրականապէս
աշխատող առաջնորդ մը:

Իսկ գալով Մարգուանի խնդրոյն, ծա-
նօթ ըլլալով Ձեր գծուծ ընթացքը, այդ
կը թողունք իրենց՝ որ պատասխանեն
թէ իրա ունք ունիք դուք:

ԵՄԲ.

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԸ ՀԵՐԵՎԻ ՄԵՋ

Ժամանակէ մը ի վեր տեղւոյս մէջ կրթութեան գործը իրենց ձեռքը անցնելու մարմաջէն բռնուած կարգ մը անձեր իրենք իրենց գիտակից շարքերու սիւսը տըւած իբր թէ աղայական հոսանքի մը դէմ պայքարելու կոչուած են՝ քանի որ աղայականութիւնը իբր թէ իր ձեռքն առած Հէրէկի ամէն գործերը՝ ժողովրդեան կամքին հակառակ կը գործէ ելլելու։ Այսպէս կ'ուզէին ցոյց տալ նաեւ վերջերս «Իրիւսի» 6-7 թիւին մէջ երեքստ տեղական լուրերու բաժնին մէջ։ Նաեւ «Իրիւս» ի նոյն թիւին մէջ կարգ մը գծուած անձանց հրապարակած փոփոխութիւններն էր տեղեկանայ թերթը թէ Հէրէկի Ազգ. Ինքնառիւթեան հասկէզ դեփոս դատարարը հաւ համայնքէն անջատուելու ոտարնագոյն միջոցին կը դիմէ եղեր՝ լոնտոնցիութեան մասերով, եւագոկիոյ ժեզուիթ միաբանութեան հետ։

Տոյց տալու համար հառարակութեան թէ այդ ինքզինքնին ժողովրդեան ներկայացուցիչներ դաւանող և այդ սխալ տուող անձեր որ աստիճանի համակրութիւն կը վայելեն ժողովրդեան մէջ՝ կը բաւէ ցոյց տալ Օգոստ. Տին կատարուած թաղականական խորհրդեան արդիւնքը։

Չճական քուէ շահեցան անոնք՝ որոնց համար տղերք կը պնդէին. և ի միջի այլոց նաեւ Շաւարշ վարդապետ թէ՛ «Ժողովուրդը մեր հետն է, անոնք չ'պիտի կրնան չահլի»։ Եւ այդ իրենք շահեցան այս միայն 2, 4, 5, 64, 104 քուէներով։ Ինչպէս կը տեսնուի՝ իրենք իրենց մէջ իսկ կազմակերպուած չեն ելլել որ Չէն սկըսեալ 104 քուէները բաժնուան են Էսմ ձեռքով վրայ։

Կը տար յետեւ այս խառնակութիւնը յառաջ բերող գիտակից շարքերուն թէ այս էր Ձեր «Ժողովրդեան ամբողջութիւնը մեր հետն է» լռելուդ արդիւնքը։ Սա-

կայն չենք զարմանար Ձեր այս ընթացքին՝ քանի որ ամէն ուր որ դուք մտած էք և ի՛նչ գործի որ միջամուխ եղած էք յանուն ժողովրդեան խօսած էք՝ մինչդեռ Ձեր ետեւ ունիք միայն քանի մը աշխատանք և կարգ մը ինտեսակներ։

Գալով երկրորդ մասին, թէ Հէրէկի ջոջերը դիմած ըլլան ժեզուիթներու՝ այդ ևս բացարձակօրէն այդ գրառակիցներու մէջտեղ հանած ստորին տուտերն են։ Հանրային կեանքի մէջ երեքստ այս խիստ բընական վիճակը նոր չէ որ պիտի տեսնենք, քանի որ, ամէն ուր թերթերու մէջ կը կարդանք այն ստույգութիւնները՝ որոնք Ձեր նպատակը յառաջնորդելու կը ծառայեն։ Եւ ինչ որ դուք կ'ուզէք մեղադրել մեզ ժեզուիթներու դիմած ըլլալու ամբողջականութեամբ՝ դուք արդէն չափ լաւ տեսնուած էք անոնց սկզբունքը՝ որ է «նպատակը միջոցը կ'արդարացնէ» ի վարդապետութիւնը որ Ձեր հոգին գրառուած է անով և Ձեր հանրային կեանքի մէջ ամէն ուր տեսնուած զրպարտութեան և սեւացրիք քաղաքականութեամբ աւերիք հայուն մաքուր հոգին, և ինչ որ աղնու էր՝ քանդեցիք. ու կ'աշխատիք Ձեր դէմ կռուող մաքուր տարրն ալ նմանցնելու Ձեզի։ Հէրէկ իր մէջ ցարդ հաւատափոխներ ունեցած չէ. և այս առթիւ դիտել պիտի տանք «Իրիւս»ի պատ. խմբագրութեան որ իր սկսած գործը յառաջ տանելով՝ Շաւարշ վարդապետն ալ քիչ մը մղէ գործունէութեան՝ որ իր սփռին առջև ամէն ուր հաւատափոխներու բազմութեան հող տանի և չի մասնէ զանոնք «Ինքնատիտ լոյս տար»ի հեռուորդներուն։

Մեզ տարօրինակ թուած կէտերէն մէկն ալ այս է թէ, ինչո՞ւ արդեւք Շաւարշ վարդապետ մինչ այժմ այս ընտրութիւնը չի վաւերացներ և ժողովրդեան մէջ ար-

րող զժգոհութեանց առջևը չ'առնելու
Բաւ չի՝ նկատել արդեօք այսքան զօրա-
ւոր քուէներու արդիւնքը՝ համոզելու հա-
մար զինքը թէ մինչև Թոգատ տղերցո՞ւն
գացած պատգամաւորութիւնը չէ որ կը
ներկայացնէ ժողովրդեան ձայնը։ Եթէ

դեռ չէ համոզուած՝ թող բեկանէ ընտր-
ութիւնը, նորէն սկսինք. և այս անգամ
կարծեմ թէ 101ը 11ի իջնէ։ Կ'ուզէ՞ք
Հայր Սուրբ։

Մ. Յ. Հ.

Օգոստոս 20ին տեղս ժամանել իթիւ-
ֆական պրօպագանդիստ Շէվ.Քէթ պէյ։
Ասիկայ այն տնձն է՝ որ Երեսփոխանական
ընտրութիւններու պահուն իթիթհատական
կառավարութիւնը բռնի ուժով տեղէն
վտարել, իսկ այսօր ժողովրդեան ջիւղ
համակրանքներով ընդունուեցաւ։

Նաեւ նայն օրը ժամանեց Ս. Գ. Հնչ. Կուսակցութեան Կեդրոնական Վարիչ
մարմնայ նախկին անդամներէն ընկեր Ս.
Մուրատ, ու մեկնեցաւ Սերաստրա։

Նաեւ շարաթէ մ. ի վեր մեր մէջ կը
գտնուի մեր համակրելի ասքիթներէն,
Տիար Փոթուզեան՝ որ ասթիէ մը ի վեր
Պոլիս և Կոնստանտնուպոլիս քաղաքներ
չառ մը փորձերով գործնականացուցած է
600ը և մասնագիտութիւն կը բնակէ Արս-
ղանի հիւանդութիւնները. քանի մը
օրէն ալիարի մեկնէ թոգատ և էրպաթա.
յաջողութիւններ։

Քաղաքական ժողովի նախկին անդամ
ներէն և Ամասիայիներէ սիրուած դէմքե-
րէն Յարութիւն էֆ. Թիթիւնճեան, Բէ-
թիի կողմէ պաշտօնով փոխադրուեցաւ
Եէնի Շէնի։ Իր մեկնումով զգայի պա-
կաս մը կը մնայ Ամասիոյ Հայ Համայն-
քին մէջ։

Թերթիս խմբագիրներէն Յարութիւն
էֆ. Գարամանեան ամբողջ ընտանեօք Ա-
մերիկայ գաղղեց։ Խմբագրական մարմի-
նրս իրենց ողջերթ մաղթելէ վերջ, պարաք
կ'զգայ բոկ թէ Ամասիան կրթական կա-
րեւոր ուժերէ յաճախուեցաւ յանձին երկու
Յարութիւն էֆ. ներս, որոնց աշխատու-

թիւնը Իբրանուսեան վարժարանի սաներու
վրայ սրտշաղէս կը տեսնուի։ Այս երկու
ուժերն էլն որ Ամասիոյ ասիին շարք մը
աշակերաններ՝ որոնք այսօր հրապարակի
վրայ իբր Ամասիացի երիտասարդներ ներ-
կայանալու վիճակին մէջն են։ Թող տես
նին անոնք՝ որոնք յոխորտանքով իրենք
իրենց փայլ տալ կ'ուզեն իբր երթական
գործիչներ։

Թերթիս աշխատակի ներէն թողէս էֆ.
Ժամկոչեանի նշանաւ ուժեւան առ թիւ
խմբագրութիւնս կողմէ իր ջիւղմաղին չե-
նորաւորութիւնները յայտնել. ու կը մաղ-
թէ երջանիկ ամուսնութիւն։

Օգոստոս 20ին իրիկուան ժամը մեկու-
կէօին Ս. Գ. Հնչ. Կուսակցութեան պիւ-
սիին մէջ բանախօսեց Տիար Արշակ Թիւ-
թիւնճեան՝ նշելով ունենալով «Մարդ և
ոյժ»։ Չեւհասարէն բացատրել թէ ազգ
մը կրնայ իր գոյութիւնը պահել միայն
բարոյական ոյժով. և պատմական փառ-
տերով յոյց տուաւ այն ազգերը որոնք
տունն իր բարոյական ոյժի կորսնցուցած են
իրենց գոյութիւնը։ Տիար Արշակ Թիւ-
թիւնճեան խիստ կարճ ժամանակի մէջ
կրցաւ չափել Ամասիացիներու համակրան-
քը. իր համամեալ խօսքերուն մէջ կը
նշմարտի ազագայի մարդը՝ օգտուած
չառ մը առաքինական ձիրքերով և առա-
ւելութիւններով։

Արտօնստր՝ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՆԵԱՆ

Խմբագրապէս՝ ՄԻՆԱՍ ԻՓԷՔՃԵԱՆ

Տպ. ՅՈՎՆԱՆԵԱՆ ԵՒ ԵԱՐՏԵՍԵԱՆ

استعمال ایدلکاری ویر دائرة انتخابیه اعتبار او-
لئان هر سنجاق داخلنده تشکیل ایدلجک شعبه
انتخابیه لر تقسیمات حاضره ملکیه اقتضاسنجه اوتد.
دن بری او سنجاقه مربوط اولان قضالردن و
هر قضا داخلنده که نواحی ایللر قراردن مرکب او-
لمق هم قانون اقتضاسندن ایکن شعبات مذکوره
تشکیلاتنده دخی حکم صریح قانونیه دن انحراف
ایدلرک بر قضایه مربوط اولان کویلرک دیگر
قضا شعبلرینه الحاق و بعضی محمولده بوصورتلده-
ده اکتفا اولقیهرق آیری آیری سنجاقلره مر-
بوط اولان کویلردن مرکب شعبه تشکیل ایدل-
لدیکی و انتخاب بوصوللری ایللر صندوقلرک سوء
استعماله مساعد رشکلده یا بلدیفی اولو آخر وارد
اولوب تدقیق ایدیلان شکایتمالردن منقهم او-
لمقددر . مبعوثان انتخابات عمومیه سنک الیوم مر-
عی بولئان قانون مخصوص دائره سنده و هر درلو
مداخلات و تضيقاته و سوء استعمالدن آزاد
ده بر صورتده تأمین جریانیله حق انتخابی حائز
اولان عموم وطنداشلرک کمال حریت و استقلال
لیات اعطای رأی ایتلری اسبابنک استیکمالی
منافع علیه مملکت ایجادندن در . یمنه تعالی بو
دفعه کی انتخابات عمومیه سنک کمال بیطرفی و سر-
بستی ایله اجراسنه حکومتجه بالخاصه اعتنا و
فرقه غیرتکشللکله وظیفه لر ی سنو استعماله
جرات ایدلجک مأمورینک تأدیلرینه مسارعت
مقرر اولدیفی کی انتخابات مبعوثان قانوننه نظراً
ملکیه و بلدییه و ضابطاندن ماعدا مأموریندن
انتخاب امرنده هیچ بر وظیفه لر ی اولیان ما.

مورین سائرمنک کدرک طوغریدن طوغری به
و کدرک بالواسطه انتخاباته مداخله دن قطعاً توقی
ایتملری لزومیده مرجع لرندن کندیلرینه اخطار
ایتدیرلمش اولقله جانب ولایتدن دخی بالعموم
مأمورینه و صابای سربیه و مؤثره ايفاسنه و
معاملات انتخابیه سنک قانون مخصوص دائره سنده
تأمین جریانی ماده سنک علی الدوام نظر دقت
و تقیضدن دور ایدلنک و هر قضا شعبات
انتخابیه سنک او قضایه مربوط نواحی و قراردن
مرکب و تشکیلنه و انتخاب بوصوللرینک
سنو استعمالی واقع اولاجق بر صورتده
ترتیبیه و هر فرقه منسوبی کندی برو
غراضیه ترویج ایچون اراد نطق ایللر ترغیبانده
بولقمقدن قانوناً ممنوع دکلمده آسایش و استظام
عمومی بختل حرکاته و قانون مذکورک پیش
ایکجه و یتیش اوجنجهی ماده لرنده محرر احواله
تصدی ایتدکلری تقدیرده مزکور ماده لر حکم
نجه حقلرنده تعقیبات قانونیه به بالمسارعه معاملات
انتخابیه سنک اخلال و افساد ایتدیرلماسنه فوق
الماده اعتنا و اشبو تلغرافنامه سنک داخل ولا-
یته اعلان ایدلمسی توصیه اولنور.

داخلیه نظارت جلیله سنندن تبلیغ اولئان

تلغرافنامه سنک صورنیدر .

مجمعین طاعیلهرق ارناوودلقده کی قیام
مسئله سنک ختام بولمش عد ایدلمسی لازم کله-
حکی هیأت تحقیقه رئیس مشیر پاشا حضرترلری
طرفندن بیلدیرلمشدر.

عوامیه مغایر حسیات انسانیتپرورانه متصف عالمه بدرلری بولوب حیات و موجودیتلری دوجار تهلمک ايله مأموریتلری تکمیل تاثیر و قوتيله محافظه لرینه تودیع اولنان و ملکیتک اعمار و احیاسنه بادی اولان انسانلری عرض سینه شجاعت ايله قهرمانانه حمایه و بوسورتله وطنه خدمت و شهاب کی کورین ارباب و مقتدر مأمورلر تشویق ترغیب و ترفیع مأموریتله نائل مکافات اوله حق برده هر نوع اعتسافه معروض اولدقلری باتجربه و تألف عظیم ايله کورباش و سیلمشدیر .

اطنه حادثه دلسوزی انساننده بیکارجه جانلرک تخلیصنه سبب اولان بر ملازمک اینش اولدی فداکارلقلری و ابراز ابتدیی شجاعتی تعریف و تمداد ايله اهالی و مرخصلر طرفندن مومی ايله ملازمک ترفیع مأموریتی نیاز و طلب اولمش ایکن حکومت مرکزیه دن . نجه قتالان تخلص جان ایدن بر اهالینک رجا و نیاز حنندارانسی و شجیع بر ضابطک ترفیع رتبه حق نظر اعتبایه المروق اسماق مسئول اوله حق برده مأموریتدن عزایله نائل مکافات اولمشدر . بر اداره مشروطیت دورنده بو بویه اولدی . و دهها زیاده غرائی ده واقع اولمشدر . . .

سابق قایمه زماننده بونلر واقع اولوب بولمک کی ر چوق حادثلر بدبخت وطنم زده هر کون مکرراً وقوعه اولدیغدن اهالینک شکایتلرینه بادی اولایلر . قایمه لر تبدیل اولدی ایسه ده عجباً قوای مدبره نک جالت فکریه سیده تبدیل اولدی می عجباً تسببتدن ناشی ظهوریاب اولان بلبلر دنطولایی شدیه قدر بر دایه نک مأمورک مسئول غوتیلیمو خاطرلر د وارد اولور می . خلافتنه ایسه دلائل چوقدر .

اولیای اموریمز شونی سیلملیدرکه مملکتیمز نجات بوله بیایر . اولاً امنیت داخلیه نک اعاده و ابقایله . ثانیاً . میانه عناصر مرالذکر حالت فکریه نک شو ز ازاله سیله . ثالثاً . اعتماد عموم می ایچون وسائط اقتصادیه و اختلاطه نک وجوده کتورایله . سرکرده بولنان اولیای اموریمز . دن بونلری بکلر . عکس تقدیر زده ایسه ده اوراده قاله جیمز کی بلکه برزده کبری کیده جیمز . دونکی کونده خطالری ایچون موآخذ اولنان خلانکرلر بو کون کندیلری موآخذ ایدجکار اگر قوچانه حادثه سنت قاعملری جزای سزالری چکزلر ایسه . م . ایکجان



ولایتدن تبلیغ اولنوب ملحقاته و دواژه تسمیم ایدیلن تلغرافنامه صورتی

کچن سنه بعض نظرلردن وقوعه بولان غیر ایتمدیکی امور انتخابیه ده قانوناً معن بر وظیفه ايله قانونی تبلیغات اوزرینه مبعوتان انتخابات عمومیه مکلف ایلیمان مأمورین عدلیه و علمیه و مالیه و سنک قانون مخصوصنه موافق صورتده جریان سائر نک انتخاباته مداخله و نفوذ و سمیلری سوء

امانتیه

طشره منادیسی

برنجی سنه

۳۰ تموز سنه ۳۲۸

نومرو ۲۰

فکرت مخربه

قوجانه حادثه مدعشه نك تفصیلات رعشه داری مطالعه ییورانلر البته اكلا دیلر كه سنه لر -
دنبری اهل نك بر قسم كلیسندنه نه كبی بر حالت روحیه ، بر حس و بر نمایلات مخربكارانه
حكمفرما اولمقددر .

نك غزتلرندن بعضیلری بو واقعه نك ظهورینه بلغار قومیه چتله نك فعالیتی سبب
كوستریورلر . بز بونی قبول ایله بلغار چتله نك شو حرکتی مغایر انسانیت و درجه افراطده
کورورز . بونك ایله رار بر طاقم اهل نك استعداد معنویسی جفته دوشونورز كه بویه حالرده
وطنداشلر نك ، دونکی دوشلر نك و قومشولر نك اوزرینه هجوم ایدرلر . و آنلر ك دردلرینه
همدرد و شكایتلری ایشیدوب حمایت و معاونت ایدمك یرده تخریب قتال و طالان ایله مملكتك
غصب و حیاتی مٹاسنده اولان احوال مالییه و اقتصادی بی محو و نابید ایدرلر .
دهرلر دنبری بو بویه اولمش . دور حمیده بویه اولدی و اداره مشروطیت الیده دخی
حالا بویه اولمقددر .

بناءً علیه شو مطالعه ذاهب اولمقددر . كه بو مثللو احوال مؤله بر طاقم بحران مالییه
مدنیت عالمك مواخذه سنه . حتی بو كبی واقعه دلخراشی اداره ایدنلر ك بر حادثه مؤسسه آلت
اولدقلری خالصه اقرار ایلدكلرینه رغماً ینه عینی مملك عینی استعداد معنوی حكمفرما و
دوام ایتكدهدر . عجباً حكمتی ندر .

بز بو كبی احواله ظهور یافته اولان وقایع قویون سورسی كبی عرض مناسبت ایدن
اهالی بی مسئول طانییوب انحق اهالی بی اداره دعوت اولنان هیأت مسئول طانییرز .
اهالی بی تشویق ایله فطره بغما حیل و جنایت اشتیاقندن سوق اولنان تحریكات

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԹԱՊԻՊԵԱՆ ԱՄԱՍԻԱ

Ոսկի գուրուն եւ պրիճ նաեւ սէշիւ-
րոյս արհեստական ասամներ շինելու
և մերիկեան մեքօսը սորվիլ ուզող
բոլոր ասամնաբոյժերու կը յայ-
տարարէ թէ ինք պատրաստ է ալդ
մեքօսը սորվեցնել նպաստաւոր
պայմաններով:

اوتل کبره میتجان

مدیر

طرازونلی آرداشیس

مرزیه-ون

یکی ماوغری یولده هواسی کوزل و یکی یایلیش
اولان بو اولده هر شئی غایت تمیز اونوب اوتلک
مدبری مسافرلری صوک درجه ممنون ایلد، جکی

آهید ایلر

ՕԹԷԼ ՔԻՂՄԻՏՃԵԱՆ

ՄԱՐԶՈՒԱՆ

ՏՆՕՐԷՆ

ՏՐԱՊԻԶՈՆՑԻ ԱՐՏԱԵՍ

Նոր շխաակ ճամբուն (եէնի սողորու եօլ)
վրայ օդասուն գիրքով և հանգստաւէտ
ամէն պայմաններով օժտուած նորահաս-
տատ հիւրանոցին մէջ ճամբորդներ ամէն
տեսակ շէրիւթիւններ ու հանգիստ կը
վայելին, Ճաշակաւոր, կանոնաւոր և
մաքուր սպասարկութիւն: Միակ հիւրա-
նոր Մարգուանի մէջ, ուր իջևանողը
պիտի մէկնի գոհունակութեամբ:

ՓՈԻԹԱՑԷՐ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԴԻՄԵԼ

ԿԱՐԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ

ՋԻՆԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ

ԲԱԼԸԳ ՊԱՇԸ—ՍԱՄՍՈՆ

Կը վաճառէ ամեն կարգի ու ամեն տե-
սակ փամփուտ 0 | 25 գեղջով: Թող դի-
մեն, բոլոր առիթէն օգտուիլ գիտողները
վստահ ըլլալով թէ իրենց ճանք նկատի պի-
տի առնուի միշտ: Մեն փորձեցեմք եւ հա-
մոզուեցեմք:

ՆԱՄԱԿԱՆ ՔԻՓ

Սունկուրլու, Լ. Գասապեան— Ասացանք
Ձեր 24 բուսկիրը, կ'աշխատուի եւ կը տե-
ղեկագրուի Ձեզ:

Ձեյթուն, Մինրան Աղապարեան— Ձեր
փափաքին համաձայն կը կարգադրուի:

Կ. Պօլիս, Պայպլ շաուգ. Կ. Քեթիբեան
— Ձեր բարբ առիթն, պայմանները եւ իր
մասին տեղեկութիւններ հաղորդեցեմք փո-
քով:

Կարին, Լ. Կ. — Ձեր փափաքին համա-
ձայն կը կարգադրենք:

Ֆենեքե, Կ. Պետրոսեան— Նոր հացերն
կը դրուի. կը հրատարակուի ժամանակին.

Կիւրին, Ջ. Ս. — Ձեր նոր հացեցներուն
կ'սպասենք:

Զօրում, Արժ. Տ. Ա. Քհնյ. Տիվանեան —
Յուլիս 17 | 20 բուսկիրնիդ ստացանք, կը
սպասենք:

ԱՄԱՏԻՅԷ

شرائط اشترا
بر سنه لکى بر مجید
الى ایلنى یارم مجید در

صاحب امتیاز و
مدیر مسئولی
حایقازون صیبيان

یاخود

سر محرری مناس ییکجیان

طشره منادیسی

سیاسی فی ادبی اقتصادی و اخلاقی! عزته در
هر اون بش کونده بر نشر اولنور

نومرو ۲۰

۳۰ تموز ۱۳۲۸

برنجی سنه

محتویات

م. اییکجیان

فکرت مخربه

رسمی اوراقلر

مطبعه مزده ترکیه ارمنیجه روجه فرانسیزجه و انگلیزجه لیسانسلیله هر نوع اعلانات،
اوراق تجارت، قارت و بیزنسلر، مکاتوب باشلری، کتابلر، غزتهلر و مطبوعاته عائد سائر هر نوع
ایشار غایت تمیز و مزاق اوزره طبع اولنیور. مقصد یکانه من محترم مشتریلمیزی ممنون
قلماق در. هونانیان و یاردیمیان شرکاسی

Տպարանիս մէջ Տանկերէն, Հայերէն, Բունարէն, Ֆրանսերէն, եւ Անգլի-
իերէն լեզուներով ամէն տեսակ Ազդեր, Վաճառականական քղքեր,
Քարտ վիզիթներ, Նամակագրութիւններ, Գրքեր, Թերթեր եւ տպագրական
ուրիշ ամէն տեսակ գործեր խիստ մաքուր եւ ճշտակաւոր կը տպագրուին:
Միակ նպատակնիս է գոն թողուլ յարգելի յանձնարարները:
Յովնանեան եւ Եւթեմիեան

آماسیه ده

مطبعه هونانیان و یاردیمیان